ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԱՊԱՐԴՅՈՒՆ ԱՆՑԱԾ ԿԱՐԱՆՏԻՆԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 2
   1.1. Արդյունաբերություն 3
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 5
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 9
   5.1. Բյուջեի եկամուտներ 9
   5.2. Բյուջեի ծախսեր 10
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 11
   5.4. Պետական պարտք 11
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 12
   6.1. Գնաճ 12
   6.2. Ավանդներ և վարկեր 13
7. ԱՄՓՈՓՈՒՄ 14

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով ներմուծված սահմանափակումները ստեղծել են ճգնաժամային իրավիճակ: Ապրիլ ամսվա 12-ամսյա ՏԱՑ-ը, այսինքն՝ ապրիլ ամսվա աճը, նախորդ տարվա ապրիլի նկատմամբ կազմել է -17.2 տոկոս, ինչի պատճառը ամբողջ ամսվա ընթացքում գործող գրեթե բոլոր ոլորտներում տնտեսական խիստ սահմանափակումներ են եղել: 2020թ. հունվար-ապրիլ ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը եղել է բացասական՝ կազմելով -1.7:

Հարկ է նշել, որ ՀՀ վիճակագրության կոմիտեն, հունվար-ապրիլ ամիսների տնտեսական ցուցանիշները հրապարակելիս ճշգրտել է նախորդ ամսվա ցուցանիշը: Այսպես, մարտ ամսվա ՏԱՑ-ը -4.9%-ից դարձել է -4.4%, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ը 4.0%-ից դարձել է 4.1%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են շինարարության և առևտրի ոլորտները՝ համապատասխանաբար -1.5 և -1.1 տոկոսային կետերով: Ծառայությունների ոլորտը ունեցել է զրոյական նպաստում, իսկ արդյունաբերության ոլորտը հակազդել է տնտեսական անկմանը 0.8 տոկոսային կետի չափով: Գյուղատնտեսության ցուցանիշները ամսական կտրվածքով շարունակում են չհրապարակվել:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի բարձր աճը նույնպես կտրուկ նվազել է, սակայն կուտակային աճը դեռևս մնում է դրական: 2020թ. ապրիլին արդյունաբերության թողարկման ծավալը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ նվազել է 8.6%-ով, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների աճը կտրուկ նվազել է՝ կազմելով 4.2%:

Արդյունաբերության աճը շարունակում է հիմնված լինել հանքարդյունաբերության վրա: Այսպես, հունվար-մարտ[1] ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 8.7%, որի 4.7 տոկոսային կետը պայմանավորված է հանքարդյունաբերության 26.9% աճով, իսկ 2.5 տոկոսային կետը՝ մշակող արդյունաբերության 3.8% աճով: «Էլեկտրաէներգիա և գազի մատակարարում» ենթաճյուղը աճել է 11.7%՝ ունենալով 1.8 տոկսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 17.8 տոկոսով՝ արդյունաբերության ընդհանուր աճին ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Ինչպես 2009-ին, այս տարի նույնպես ճգնաժամի արդյունքում ամենամեծ անկումն է գրանցում շինարարության ճյուղը: Ընթացիկ տարվա ապրիլին շինարարության ծավալը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ նվազել է 51.0%-ով: Արդյունքում, շինարարության անկումը հունվար-ապրիլին կազմել է մոտ -21.9%:

[1] Հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %[2]



Ծառայությունների կուտակային աճի տեմպը դարձել է գրեթե զրոյական, իսկ ամսական ակտիվությունը անկում է գրանցել: Նախորդ տարվա ապրիլի նկատմամբ ծառայությունների ոլորտի անկումը կազմել է 15.9%, իսկ հունվար-ապրիլ ամիսների աճը դանդաղել է՝ հասնելով 0.1%-ի: Հունվար-մարտ[3] ամսվա տվյալներով ծառայություններն աճել են 6.0%-ով, ինչին հիմնականում նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործունեության 12.9% աճը և մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղի 8.5% աճը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.0 և 2.1 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



[2] Ծառայությունների մարտ ամսվա ցուցանիշը վերանայվել է, ինչի արդյունքում հունվար-մարտ ամսվա ծառայությունների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5.5%-ից դարձել է 6.0%:

[3] Հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Առևտրի ծավալները ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել են 33.1%-ով: Առևտրի ծավալների աճի տեմպի դանդաղումը սկսվել էր դեռևս փետրվար ամսից, իսկ մարտին և ապրիլին այն ավելի խորացավ: Արդյունքում, հունվար-ապրիլ ամիսների անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է -8.6%:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %[4]



Մարտ-ապրիլ ամիսներին արտահանման ծավալները զգալիորեն նվազել են: Տնտեսական անկման պայմաններում արտահանման ծավալները ապրիլին նախորդ տարվա ապրիլի նկատմամբ նվազել են 30.3%-ով: Կուտակային անկման ցուցանիշը հունվար-ապրիլ ամիսներին կազմել է 8.1%:

[4] Արտահանման ցուցանիշները նույնպես վերանայվել են, ինչի արդյունքում հունվար-մարտ ամսվա արտահանման աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 0.2%-ից դարձել է 0.5%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ[5], %



Ներմուծման ծավալները նույնպես զգալիորեն նվազել են: Ապրիլ ամսվա ներմուծման ծավալները նախորդ տարվա ապրիլի նկատմամբ նվազել են 27.4%-ով, իսկ կուտակային՝ հունվար-ապրիլ ամիսների անկումը կազմել է 11.5%:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ 2020թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 9.3 տոկոսով: Ընդ որում, պետական հատվածում աշխատավարձն աճել է 9.1 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 8.8 տոկոսով: Ըստ ՀՀ ՎԿ պարզաբանման՝ ապրիլ ամսվա միջին ամսական անվանական աշխատավարձի հաշվարկում բացակայում են 9 հազարից ավելի կազմակերպություններում մոտ 31 հազար աշխատողների աշխատավարձի ցուցանիշները, քանի որ COVID-19-ի հետևանքով նրանք ապրիլին գտնվել են չվարձատրվող հարկադիր պարապուրդում: Ընդ որում, դրանք հիմնականում մինչև 80,000 դրամ միջին ամսական անվանական աշխատավարձ ունեցող փոքր և գերփոքր կազմակերպություններ են: Հետևաբար, աշխատավարձի աճի ցուցանիշները կարող են գերագնահատված լինել:

[5] Ներմուծման ցուցանիշները նույնպես վերանայվել են, ինչի արդյունքում նախորդ ամիսների ցուցանիշները փոխվել են՝ հունվարի ցուցանիշը 2.1%-ից դարձել է 2.8%, հունվար-փետրվարինը՝ -0.6%-ից դարձել է 0.1%, իսկ հունվար-մարտինը՝ -6.2%-ից դարձել է -5.6%:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ. հունվար-ապրիլ, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)







2020 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 0.5 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 3.7 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 4.8 տոկոսով:

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում ազգային արժույթները նշված ժամանակահատվածում արժեզրկվել են կորոնավիրուսի հետևանքով ստեղծված իրավիճակի պատճառով, մինչդեռ Հայաստանում դրամը արժևորվել է, ինչը բնականաբար բացասաբար է ազդում ՀՀ արտաքին մրցունակության վրա՝ դժվարացնելով տնտեսության վերականգնման հետագա գործընթացը:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Հարկային եկամուտների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է: Հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են մոտ 6.5%-ով: Ընդ որում, հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են մոտ 7.3%-ով, ինչը 9.2 տոկոսային կետով ավելի ցածր է, քան հունվար-մարտ ամիսների աճը: Հարկային եկամուտների աճին հիմնականում նպաստել են եկամտային հարկը և շահութահարկը՝ համապատասխանաբար 2.8 և 2.4 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ. հունվար-ապրիլ

	Ծավալը, մլրդ դրամ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**500.7**	**7.3**	**7.3**
ԱԱՀ	149.0	2.5	0.8
Շահութահարկ	90.7	14.3	2.4
Եկամտային հարկ	145.6	9.7	2.8

Ակցիզային հարկ	36.0	11.2	0.8
Շրջանառության հարկ	13.6	9.6	0.3
Արտոնագրային հարկ	0.0	-98.4	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	17.4	34.8	1.0
Մաքսատուրք	21.0	-20.5	-1.2
Սոցիալական վճար	7.8	19.5	0.3
Այլ հարկային եկամուտներ	9.0	36.3	0.5
Պետական տուրք	10.8	2.4	0.1
Հարկերի անցումային գերավճար	-0.2	-	-

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակվել է նաև ապրիլ ամսին: Այսպես, հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր ծախսերն աճել են 22.3 տոկոսով՝ կազմելով 508.2 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերն աճել են 18.4 տոկոսով՝ կազմելով 482.8 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 3 անգամ՝ կազմելով 25.3 մլրդ դրամ:

Ծախսերի աճի տեմպը արագացել է ապրիլ ամսին, ինչը դրական երևույթ է, քանի որ ծախսերի միջոցով խթանվում է տնտեսական ակտիվությունը: Սակայն կապիտալ ծախսերը դեռևս հեռու են բավարար լինելուց, քանի որ միայն հունվար-մարտ ամիսների համար պլանավորվել էր իրականացնել 42.4 մլրդ դրամ

կապիտալ ծախսեր, որի համեմատ նույնիսկ հունվար-ապրիլին կատարվել է ընդամենը 25.3 մլրդ դրամը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: Պետական բյուջեի ծախսերի առաջանցիկ աճի հետևանքով, բյուջեի հավելուրդը նվազել է՝ կազմելով 18.1 մլրդ դրամ: Կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի պետական բյուջեի ծախսերի կատարողականի վրա, քանի որ ճգնաժամային պայմաններում անհրաժեշտ է ավելի մեծ արդյունավետությամբ և սահմանված չափով իրականացնել բյուջեի պարտավորությունները՝ տնտեսական անկմանը հակազդելու համար:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



2020թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,406.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճելով 7.3%-ով: ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,911.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 8.7%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 120.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 1.8%-ով: Ընդ որում, աճը տեղի է ունեցել ներքին պարտքի հաշվին, որն աճել է 9.6%-ով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



Երկու ամսվա գնանկումից հետո հունվար-ապրիլին արձանագրվել է գնաճ: 2020-ի հունվար-ապրիլին գրանցվել է 0.9 տոկոս գնաճ: 2020թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն արդեն երկու անգամ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 5.0%-ի: Սակայն, գնաճի տեմպը բավականին դանդաղ է արագանում և դեռևս հեռու է ԿԲ-ի թիրախից:

6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-ապրիլ ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2019թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 12.2 տոկոս: **Ավանդների ծավալների աճի տեմպը զգալիորեն նվազել է,** որը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց ավանդների ծավալի 3.7% նվազմամբ, ինչը ընդհանուր ավանդների աճին ունեցել է բացասական նպաստում՝ -0.6 տոկոսային կետով: Տնային տնտեսությունների ավանդները նույն ժամանակահատվածում աճել են 10.4%-ով՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 5.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 16. Վարկերի 12-ամսյա աճը, %



Վարկերի աճի տեմպը նույնպես դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ աճել են 17.1 տոկոսով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազելով 3.3 տոկոսային կետով:

Վարկերի աճին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը (աճը՝ 28.3%) և հիպոթեքային վարկերը (աճը՝ 11.7%)՝ համապատասխանաբար 5.9 և 3.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Կորոնավիրուսը Հայաստանում



Գծապատկեր 17-ում ներկայացված են կորոնավիրուսի վերաբերյալ վիճակագրությունը Հայաստանում: Ըստ էության՝ տնտեսական սահմանափակումները կիրառվել էին համավարակի տարածումը կանխելու նպատակով: Սակայն տվյալները ցույց են տալիս, որ սահմանափակումները բոլորովին արդյունավետ չեն եղել, և վարակի տարածումը ոչ միայն չի դանդաղել, այլև արագացել է: Եթե ապրիլի սկզբին հաստատված դեպքերը կազմում էին 532, ապա ապրիլի վերջին այդ թիվը հասել է 2066-ի, իսկ մայիսի 25-ի դրությամբ՝ 7113-ի:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Կորոնավիրուսի հետևանքներն արդեն հստակ կարելի է կոչել ճգնաժամային: Տնտեսության բոլոր ճյուղերում ապրիլ ամսվա տվյալներով գրանցվել է խոշոր անկում՝ երկնիշ թվերով:** Ամենամեծ անկումը գրանցվել է շինարարության ոլորտում՝ 51%: Քանի որ մայիսի կեսերից հանվել են տնտեսական սահմանափակումների մեծ մասը, ապա հնարավոր է անկման տեմպի որոշակի դանդաղում, սակայն կորցրած տնտեսական արդյունքը դժվար թե հնարավոր լինի վերականգնել տարվա ընթացքում:

2. **Կառավարության կողմից կիրառված տնտեսական սահմանափակումները եղել են անարդյունավետ:** Ապրիլ ամսին տնտեսական անկումը կազմել է 17.2%, իսկ վարակման դեպքերը ավելացել են մոտ 4 անգամ: Հետևաբար, տվյալները ցույց են տալիս, որ Կառավարության գործողությունները վարակի տարածումը կանխելու տեսանկյունից արդյունավետ չեն եղել և տնտեսությանը հասցրել են բավական խոշոր վնաս:

3. **Կառավարությունը լրացուցիչ գումարներ է ծախսում օժանդակության միջոցառումների միջոցով տնտեսությանը իրացվելիություն տրամադրելու համար, սակայն չի իրականացնում բյուջեով սահմանված կապիտալ ծախսերը:** Կառավարությունը մի կողմից հայտարարել է տնտեսական օժանդակության միջոցառումների գծով լրացուցիչ ծախսերի իրականացման մասին, որոնց հիմնական նպատակն է իրացվելիություն ներարկել տնտեսություն, մյուս կողմից չի իրականցնում բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերը: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերը ոչ միայն ապահովում են ընթացիկ իրացվելիության ներարկում և տնտեսական անկման մեղմում, այլև նպաստում են տնտեսության վերականգնման փուլում ավելի արագ տնտեսական աճի ապահովմանը: Հետևաբար, այս գործընթացում կառավարության թերացումը ունենալու է երկարաժամկետ ազդեցություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*